բայց զօրապետն ասէր, վասն խաղաղութեան քաղաքին արարի։ Յետ այնորիկ քաղաքապետն ետ չինել զխրամատս պարսպի Ս. Փրկչի, և զայլ քակեալ և ուերեալ տեղիս. ստիպէին զՀայս չինել զնոսա և դնել անդ միաբանս։

Ի միջոցիս այսպիսի խռովութեանց՝ երկուցեալ միաբանացն Հայոց ոչ կարացին երթալ 'ի Բեթղեհէմ և տօնել զԾնունդ Տեառն, զի փոյթ մեծ էր նոցա պահել զվանս Ս. Յակոբայ չմտանել եէնիչէրեաց անդ, որոյ վասն բազումս աշխատ եղեն բանիւք և արդեամբք իսկ։

Հուսկ ուրեմն եհաս հրովարտակն Յունաց յԵրուսաղէմ ('ի 12 Յունվարի), և կազմեցաւ ժողով մեծ 'ի դատարանն. կոչեցին զԹարգմանն և զՓոխանորդն Հայոց, և ընթերցան զայն առաջի բազմութեան, յորում յետ պատմելոյ զդատաստանս Հայոց ընդ Յունաց, Տէրութիւնն շնորհէ զչինութիւն տաճարին Ս. Յարութեան միայն ազգին Յունաց։ Ապա հարցին զՀայս թէ՝ ունի՞ք ինչ ասել առ այս, և նոքա ասեն՝ հնազանդ եմք օրինաց Շէրիի և հրամանի Արքային, բայց խնդրեմք համբերել մինչ 'ի գալուստ հրովարտակին Հայոց։ Ետուն պատասխանի՝ այժմ Յունք ըստ կիզրն արասցեն չինութեան ըստ հրամանի Արքային եւ ապա որ ինչ հրամայի վասն ձեր՝ այնպէս առնեմք։ Ետուն հրաման Յունաց՝ և ցրուեցաւ ժողովն։ Քաջալերեալ և ոգի առեալ Յունաց թերի թողին զչինութիւն Գերեզմանին Քրիստոսի, և փութացեալ կանգնեցին փայտակերտս առաջի մեծի դրան 'ի ներքին կողմն, և սկիզբն արարին չինել զբաժին տեղիս Հայոց, զսենեակս Տեսչին և զվերնատունն՝ այլովքն հանդերձ. ժողովեալ զքարինս չինուածոց նոցին, դատարկեալ հանին արտաքս զկահ և զկարասին Հայոց, և եղեւ միաբանաց և ուխտաւորաց տարւոյն սուգ մեծ եւ անմխիթար տրտմութիւն առաջի աչաց տեսանելով զյափշտակութիւն դարաւոր իրաւանց ազգին. և ժողովեալ ոմանց իբրեւ անձինք 20, ցաւ 'ի սիրտ գրեցին առ Իշխանաւորս ազգին 'ի Կոստանդինուպոլիս հոգալ զկարեւորն և բառնալ յազգէն զնախատինս Յունաց ('ի 24 Յունվարի)։

Իսկ զօրավարն Ապուզուրեան յետ բառնալոյ զխռովու-